«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա ՝ *Աշնան խորհուրդանիշը Ակսել Բակունցի և Վահան Տերյանի ստեղծագործություններում*

Առարկա ՝ *Հայ գրականություն*

Ուսուցիչ ՝ *Մայա Հովհաննիսյան*

Դպրոց ՝ *Տ. Գ. Շնչենկոյի անվան թ. 42 ավագ դպրոց*

Ղեկավար ՝ *Թամարա Թովմասյան*

ԵՐԵՎԱՆ – 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 2

§ 1. ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ 3

1.1 ԽՈՐՀՐԴԱՊԱՇՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ 3

1.2 ԱՇՆԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԸ ՏԵՐՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 5

1.3 ԱՇՆԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԸ ԲԱԿՈՒՆՑԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 10

§ 2 ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ 13

2.1 ՏԵՐՅԱՆԻ ԵՎ ԲԱԿՈՒՆՑԻ ՍՏԵՂԾԱԳԱՐՈԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 13

Հայ արձակի հենասյունը 13

Պոեզիայի ցողաթաթախ ուղեկիցը 14

Բակունցի և Տերյանի նկարագրած աշունների համադրությունը 15

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 17

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Օ՜, հարազա՛տ, սիրա՛ծ, եկա՜ր կրկին,
Իմ քնքշագի՜ն աշուն...



Ա. Բակունց ***Վ. Տերյան***
(1899-1937) *(1885-1920)*

Աշխարհը կարծես կորցնում է իր ջերմությունը, աշնան մշուշի, մելամաղձոտ աձրևի, դաշտերի դալկության հետ խամրում են երանավետ զգացմունքները և միայնակ հոգին սուզվում է թախծի և տրտմության «մոռացումի անձավում» և միահյուսվում աշնան դյութական հեքիաթին՝ դառնալով աշնան խոհրդանիշ:

Թեմայի արդիականությունը: Տերյանի և Բակունցի ստեղծագործություններում մտքի նմանությունն ու խորությունը շատ բազմազան են՝ լինի հայրենիքին, աշնանը, թե' կյանքին նվիրված տողերում: Այնպես նուրբ ու գեղեցիկ են հակադրվում խորհրդապաշտությունն ու իրապաշտությունը, որ ընթերցողը ակամայից դառնում է գործող անձանցից մեկը: Սույն ուսումնասիրությունն ունի արդիական նշանակություն, քանի որ խորհրդանշային պատկերների քննությունը կատարվում է երկու դասական գրողների ստեղծագործություններում, որոնք անասելի զարգացման են հասցրել հայ չափածոն ու արձակը: Աշնան խորհրդանիշը երկու ստեղծագործություններում էլ ոճական կարևոր արժեք է ստանում՝ դառնալով նշված գրողների գեղարվեստական մտածողության կարևոր բաղկացուցիչ:

Հետազոտության նպատակն *է* քննել աշնան խորհրդանիշը Տերյանի և Բակունցի ստեղծագործություններում:

Նպատակից բխող խնդիրներն են՝

- Պարզել խորհրդապաշտության (սիմվոլիզմի) գեղարվեստական ուղղության առանձնահատկությունները,
- բացահայտել աշնան խորհրդանիշի յուրօրինակ դրսևորումը Տերյանի քնարերգության մեջ,
- բացահայտել աշնանային պատկերների խորհրդանշային արժեքները Բակունցի արձակում:

§ 1. ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

1.1 ԽՈՐՀՐԴԱՊԱՇՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Խորհրդանիշը կոդ է, ծածկագիր, որը ստեղծվել է մարդկային կյանքի համընդհանուր կենսաբանական և հոգեբանական հիմքի վրա, որպես մտավոր և հոգևոր հաղորդակցման միասնական պատկեր: Այն, փաստորեն, հասկացություն է, որը դրսևորվում է կառուցվածքային ձևով՝ պատկերավոր ընկալման միջոցով:

Խորհրդանիշը որևէ առարկայի, կենդանու կամ երևույթի պատկերը կամ նշանը, որի միջոցով մատնանշվում է այդ առարկայի կամ երևույթի հատկանիշը. որոշակի հասկացությունների, գաղափարների կամ երևույթների պայմանական նշան:

Մարդու կողմից ստեղծված և ընդունված խոսքային և ոչ խոսքային նշանները ժամանակի և տարածության մեջ կրում են այս կամ այն տեղեկույթը, իսկ խորհրդանշաններն իրենց պատկերում ներառում են մարդկության կոլեկտիվ հիշողությունը, իմաստնությունը: Հնուց ի վեր խորհրդանիշը ստեղծվել է ոչ թե տեղեկատվության, այլ նախևառաջ հոգևոր արժեքներ փոխանցելու համար: Այդ արժեքները վաղնջական ժամանակներում խորհրդանիշների պատկերներով ծածկագրեր էին, որոնք քողարկվում էին հասարակ մարդկանցից, թեև քանի դեռ չկար գիրը, այդ բանավոր և բարդ իմացաբանությունն իրապես հասու չէր կարող լինել հավասարապես բոլորին, ուստի խորհրդանշանի խորքային իմաստին տիրապետում էին իմաստունները, մոգերը, կրոնական, արքունական դասի մարդիկ, իսկ մնացած մասն այն ընկալում էր միայն արտաքին հատկանիշներով[1]:

Հայ մշակույթում «խորհրդանշան» հասկացությունը, ինչպես և հունական փիլիսոփայության մեջ, սկզբնական շրջանում գործածվել է նշանի իմաստով: Հայ մատենագիտության կազմավորման փուլում նշան կամ նշանակ բառն ավելի շատ ճանաչողական կամ տարբերանշանային գործառույթ ունի, քան իմացաբանական:

Ներկայիս խորհրդանշան բառն ըստ լեզվական օրինաչափությունների համարվում է նոր բառակապակցություն, որը ոսկեդարյան հայերենում չի օգտագործվել: Իմաստային տեսակետից այդ բառն արտահայտում է «simboll» հասկացության ընդհանրական իմաստը: Եթե նկատի ունենանք, որ խորհուրդը

[1] Գագիկ Մանասյան «Խորհրդանշանների հանրագիտարան», Երևան, 2007 թ.

հայերենում նշանակում է մտածողություն, միտք, ապա պարզ ընթերցանությամբ խորհրդանշանը նշանակում է մտածողության, մտքի նշան:

Խորհրդանիշը գրողի կողմից իրականությունն ընդհանրացնող ոճական հնարանք է, որը կարևոր դեր է կատարում գեղարվեստական ստեղծագործության ընկալման գործում: Այս առումով գեղարվեստական խորհրդանիշի ուսումնասիրությունը սերտորեն առնչվում է հեղինակի անհատականությանը և վերջինիս բնորոշ ինքնաարտահայտման յուրօրինակության խնդիրների բացահայտմանը[2]:

Վերջինս շատ հաճախ է արտահայտվում Տերյանի պոեզիայում՝ աշուն, անձրև, տերևաթափ, որն արտահայտում է միայնակ և թախծոտ հոգու տրամադրությունները: Տերյանի խորհրդապաշտությունը կյանքը պատկերում էր երկպլան կառուցվածքով՝ գորշ իրականություն և դրանից վեր՝ երազի ու ցնորքի մի աշխարհ, ուր հոգին կարող էր ապրել անուրջներով: Խորհրդապաշտները կյանքի ունայնությունն իմաստավորում էին սիրո մեջ՝ ստեղծելով ցնորք աղջկա և երազ աղջկա անհասանելի կերպարը:

[2] Ջրբաշյան Էդ., Գրականության տեսություն, Երևան, 1980:

1.2 ԱՇՆԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԸ ՏԵՐՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Վահան Տերյանն առաջիններից է, ով ներմուծեց գեղագիտական մտածողության միանգամայն նոր համակարգ՝ քնարական նոր լեզու: Նա ասես գրականություն եկավ մեկ ուրիշ աշխարհից և իրենով, ինչպես Հովհ. Թումանյանն է ասել, հաստատեց մեր քնարերգության նոր՝ ետթումանյանական փուլը:

Տերյանն առաջիններից էր, որ գտավ հայրենիքի համար իրական խոսքեր: Ի՞նչ էր Տերյանի պատկերածը ժողովրդի տխուր, անապահով կյանքը, այդ տխրությունից ծնված անխինդ երգը, խարխուլ տողեր և այլն: Ասվածի վկայություն է «Երկիր Նաիրի» բանաստեղծական շարքը:

* * *

Դու հպարտ չես իմ հայրենիք,
Տրտում ես դու և իմաստուն,
Կիզում է քեզ մի հին կնիք,
Մի հմայող մի հին խոստում:

Հայրենիքի եզերքին ուղղված այս հայացքը ամբողջովին հարազատ էր Բակունցի պատմվածքներին: Դա առկա էր նույնիսկ նրա գրական առաջին քայլերի մեջ:

Վահան Տերյանն անպատկերացնելի գեղարվեստական բարձունքի հասցրեց սիմվոլիստական քնարերգությունը: «Նա մեզ ներկայանում է իբրև հայ խորհրդա նշային բանաստեղծության ամենախոշոր ներկայացուցիչը Մեծարենցի հետ միա սին»,– գրում է Ռ. Իշխանյանը: Տերյանի խորհրդապաշտությունը, սակայն, 19րդ դարի կեսերից եվրոպական գրականության մեջ տարածում գտած այդուղղության պարզ կրկնությունը չէր: Բանաստեղծի ստեղծագործություններն ի հայտ բերեցին խորհրդապաշտության լեզուն ու պատկերները, նոր շունչ հաղորդեցին ժամանակի հայ պոեզիային, նպաստեցին հայ բանաստեղծական լեզվի առավել բարձր մակարդակի դրսևորմանը, գեղարվեստական խոսքը նոր կերպարանքով հանդես բերելուն:

Խորհրդապաշտության թեմաներն ուարտահայտչաձևերը անտարբեր չթողեցին բազում արհավիրքներ տեսած ժողովրդի հանճարեղ ներկայացուցչին: Վերջինս, ստեղծագործելով նաև սիմվոլիզմի տիրույթում, ստեղծեց գրական բարձր արժեքներ:

Բանաստեղծի մի շարք ստեղծագործություններում, մասնավորապես

«Մթնշաղի անուրջներ» շարքի գեղարվեստական պատկերների ստեղծման հիմքում ընկած է մենության, հեռացման, մոռացման թեման: Ուշագրավն այն է, որ խորհրդանշային արժեք են ստանում մարդկային հոգեվիճակն ու զգացողությունը՝ տեսանելի դարձնելով ցուրտ աշխարհում դատապարտված հոգիների լուռ ապրումները, նրանց անուրջների նրբակերտ աշխարհը, ուր փրկության հանգրվան են դառնում կապույտի խորհուրդը, անհայտ հեռուն ուլուսեղեն հոգիները:

Վ. Տերյանը նոր ժամանակների առաջին բանաստեղծն է, որը բերեց նոր քնարական հերոս, նոր լեզու, նոր հոգեվիճակներ: «Մթնշաղի անուրջներ» այս նուրբ ու քնքուշ վերնագիրն է կրում Տերյանիբանաստեղծության թե՛ առաջին ժողովածուն, թե՛ հիմնական շարքը: Մթնշաղ և անուրջ:

Նա ասես գրականություն եկավ մեկ ուրիշ աշխարհից և իրենով, ինչպես Թումանյանն է ասել, հաստատեց մի նոր քնարերգության նոր ետթումանյանական փուլը: Դա պայմանավորված է Տերյանի բանաստեղծական անհատականությամբ ու գրական ճաշակով և ապա՝ գեղարվեստական այն նախադրյալներով, որոնք պայմանավորված էին խորհրդապաշտության (սիմվոլիզմի) գրական ուղղությամբ: Խորհրդապաշտությունը բերում է որոշակի խորհրդանշանների:

Տերյանի պոեզիայում աշուն, անձրև, տերևաթափ, որ միայնակ և թախծոտ հոգու տրամադրություններն էին արտահայտում: Խորհրդապաշտությունը կյանքը պատկերում էր երկպլան կառուցվածքով՝ երազի և ցնորքի մի աշխարհ, ուր հոգին կարող էր ապրել անուրջներով:

Տերյանի խոսքարվեստում գեղարվեստական խորհրդանիշի լեզվական դրսևորման ամենացայտուն արտահայտությունը փոխաբերությունն է: Առանձնահատուկ ուշադրության են արժանի հատկապես անձնավորման միջոցով մարմնավորված խորհրդանշային պատկերները:

Բանաստեղծի մռայլ ու տխուր ապրումներին հոգեհարազատ է նաև աշունը՝ մեռնող բնության գեղեցիկ վիճակը, ինչպես՝ «Աշուն է. օրերը ցրտում են…, Այնքան քնքշություն կա սրտում իմ… » («Ոսկե շղթա»), «Ոսկեհանդերձ եկար ու միգասքող, Տխուրաչյա աշուն, սիրած աշուն… » (Անտիպ էջեր), և այլն: Դիտարկենք բանաստեղծական հատված «Աշուն է. օրերը ցրտում են…» ստեղծագործությունից.

Աշուն է. օրերը ցրտում են...

Գիշերը սուզվում է միգում.

Այնքան քնքշություն կա սրտում իմ,

Այնքան մեղմություն իմ հոգում:

Այնքա՜ն տխրություն, և անուշ է,

Անուշ է ցավն այս հետին.—

Բոլորը երազ է և հուշ է,

Ոսկի է — թափվում է գետին...

Չնայած օրերը ցրտել են, ամենուր իշխում են մութն ու անձրևը, ոսկեգույն տերևները թափվում են՝ մերկացնելով ծառերը, բանաստեղծի հոգում, տխրությունից բացի, իշխում են քնքշությունն ու մեղմությունը: Այդ հոգեվիճակը հարազատ է բանաստեղծի հոգուն:

Աշունը միանում է բանաստեղծի հոգեկան ողջ շարժմանը, ձուլվում նրա հոգու մեղեդուն: Այնքան ներդաշնակ են բանաստեղծի հոգին ու բնության խորհրդավոր տարերքը, որ ցավի զգացողությունն անգամ թախծալի բերկրանք է թվում:

** * **

Նորից անձրև, մշուշ, ամպ,

Թախիծ անհուն, տխրանք հեզ,

Արցունքները քո գոհար…

Հարազատ են իմ հոգուն, Վհատությունն իմ խոնարհ,Եվ թփերը դողդոջուն,

Եվ խոտերը գետնահար…

Եվ քո երգը թախծալի:

Իմ սրտի երգն է, կարծես, Աշուն, քաղցր ու բաղձալի,

Ի՞նչ խոսքերով երգեմ քեզ…

Հեղափոխական տրամադրություններով համակված կոչը հնչում է իբրև ազատության և արդարության պատգամ: Տերյանն իր հայրենասիրական զգացումներն ու հեղափոխական տրամադրություններն արտահայտելու համար հաճախ է գործածում ճարտասանական դիմումը, որի հասցեատերեր առավել հաճախ դառնում են բնության երևույթները:

Բաղձալի աշնան ու իր հոգեվիճակի ներքին դաշնը վավերացնելու համար բանաստեղծը զուգորդել է ճարտասանական դարձույթների բոլոր տեսակները՝ և՛

ճարտասանական հարցը, և՛ դիմումը, և՛ բացականչությունը:

Նշված ոճական հնարանքները ոչ միայն բանաստեղծական այս հատվածի, այլև առհասարակ Տերյանի չափածո խոսքի հուզական հագեցվածությանը նպաստող կարևոր արտահայտչամիջոցներ են, տրամադրության ու ապրումի յուրօրինակ դրսևորումներ:

Բանաստեղծին հոգեհարազատ է աշունն իր դողդոջուն թփերով, տերևաթափ ծառերով: Աշնան նման տխուր է նաև իր հոգին, և անհուն թախիծն է պատել նրան: Բնությունը մեռնում է, և նրա հետ անշնչանում է նաև բանաստեղծի հոգին: Այստեղից էլ՝ հոգեհարազատության զգացումը: Բանաստեղծություններից մեկում աշնան պատկերը ներկայանում է իր գույներով ու «հանդերձներով»՝ կրկին խորհրդանշելով բանաստեղծի թախիծն ու տխրությունը:

* * *

Ոսկեհանդերձ եկար և միգասքող,Տխուրաչյա աշուն, սիրած աշուն.
Տերևներիդ դանդաղ թափվող ոսկով,Մետաքսներով քնքշաշրշյուն:
Նայվածներով խորին, եկար ներո՛ղ,Եկար կրկին գերող, խորհրդավո՛ր. Եկար հուշիկ, անչար ավաղներով,
Օրորներով ամենօրոր:
Քո արևին հատնող և քո երգին, երգին,
Եվ շրշյունիդ փափուկ, և բեկումիդ – ողջո՛ւյն.Օ՜, հարազա՛տ, սիրա՛ծ, եկա՛ր կրկին,
Իմ քնքշագի՛ն աշուն…

Ուշադրություն դարձնենք, որ աշնան պատկերներում խորհրդանշային արժեք ունի նաև աշնանային ոսկին, որը, ինչպես նկատում է Մ. Հովհաննիսյանը, ըստ էության, ոսկեգույնի խորհրդանիշն է: Այն իր մեջ խտացնում է լավի ու վսեմի,նվիրականի ու անփոխարինելիի զգացմունքային տարրեր:

Տերյանը ստեղծել է հոգեբանական վիճակ և աշնանային գեղանկար:Միաձույլ են բնանկարն ու տրամադրությունը, թափվող տերևներն ու մարող ճառագայթները: Ստեղծվում է քնարական հերոսի հուսաբեկ կերպարը, որի խոհերը ևս ցրտահար ու հողմահար են՝ աշնան տերևների նման, որի անուրջները ևս գարնան ցոլուն շողերի նման

մարել են արդեն:

Բազմաթիվ բանաստեղծություններում անցածգնացածը դառնում է բաղձալի ժամանակ ու վերածվում հիշողության: Անցյալի ցավը, աղջկա մերժումը նրա համար օրինյալ են որպես կյանքում հանդիպած ակնթարթային երջանկություն, որպես քաղցր ցավի արտահայտություն:

Բնությամբ շնչող բանաստեղծը աշնանային պատկերներով կարողանում է հուզել ընթերցողին, նրան համակել լուսավոր թախիծով: Տերյանի քնարերգության մեջ աշունը և տխրությունը ստեղծում են պարտադրված հոգեվիճակ, որը կենսական հանգամանքներով էր պայմանավորված: Չնայած անեզր թախիծին՝ այդհոգեվիճակը ոչ միայն անսպառ տառապանքի, այլև լուսավոր անուրջների և սպասումների աղբյուր էր:

Հարկ է նկատել, որ Տերյանի խոսքարվեստում տարվա եղանակների փոխաբերացված անվանումները հաճախակի են գործածվում: Փոխաբերական գործածությունների շնորհիվ բառերը ձեռք են բերում արտահայտչականություն՝ դառնալով նկարագրվող երևույթների, իրողությունների արտացոլման լեզվական ներգործուն միավորներ, ինչպես՝ «Մահու պես դաժան ձմեռն է իջել, մարել են, մեռել– երգ, ծաղիկ ու բույր…», «Աշնան օր է կյանքս հիմա, վիրավոր է հոգիս տրտում…», «Լույս է երկինքն ու փողոցը, Դուրսը՝ գարուն է անմութ…», «Ես ձմեռ օրով տեսա գարուն…» և այլն: Եթե Տերյանի գեղարվեստական պատկերներում աշունը և ձմեռըարտացոլում են կյանքի մայրամուտը, տխուր ու անկենդան իրականությունը, ապա գարունը ջերմ ու լուսավոր տրամադրությունների ու հոգեվիճակի արտահայտմանմիջոց է: Դիտարկված օրինակներում անմութ մակդիրի կիրառությամբ գարուն բառը հակառակ տրամադրության դրսևորման միջոց է դառնում: Ճիշտ է ասված՝ «գեղարվեստական խոսքի իմաստը երբեք չի պարփակվում նրա անմիջական իմաստի մեջ»:

Քնարական հերոսի խոհի, ներապրումի թրթռումների անմիջական մասնակիցն է դառնում բնությունը: Նրա հետ ժպտում են կարկաչուն աղբյուրն ու պայծառ աստղերը, լալիս է գիշերվա հովը, դժկամ նայում են խոժոռ ծառերը, երգում է քամին: Բանաստեղծը ոչ միայն շարժունակություն է հաղորդում բնության երևույթներին, այլև օժտում մարդկային զգացմունքներով ու բնավորությամբ: Բնությունը Տերյանի ստեղծագործություններում դառնում է շնչավոր վածանձնավորված մի կերպար, բանաստեղծական եսի ինքնադրսևորման յուրօրինակ միջոց:

1.3 ԱՇՆԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԸ ԲԱԿՈՒՆՑԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Բակունցի մասին խոսելիս, որքան էլ անսովոր թվա, պետք է հիշել Տերյանին, որովհետև արձակի մեջ կատարում է նույն դերը, ինչ պոեզիայի մեջ՝ Տերյանը:

Բակունցի պատմվածքներում աշունը խորհրդանշում է կյանքի մայրամուտը: Այն ընթերցողին իր գիրկն է առնում, տանում մինչև անտառի կամ այգու խորքը՝ հիացնելով իր շքեղ պատկերներով ու գույներով: Դիտարկենք մեկ հատված «Միրհավ» պատմվածքից.

«Աշուն էր, պայծառ աշուն…

Աշուն էր, տերևաթափով, արևի նվազ ջերմությամբ, դառնաշունչ քամիով, որ ծառերի ճղներից պոկում էր դեղնած տերևները, խմբերով քշում, տանում հեռու ձորերը: Նույնիսկ քարափի հաստաբուն կաղնին խոնարհվում էր քամու առաջ: Ամայի ձորերում, դեղնակարմիր անտառի և հնձած արտերի վրա իջել էր մի պայծառ տխրություն…»:

Աշնան պատկերը խորհրդանշում է հերոսի կյանքի մայրամուտը, հուշերն ու հոգու տխրությունը: Կյանքի մայրամուտին հասած հերոսը փորձում է վերհիշել իր ապրած օրերը: Եվ որքան էլ փորփրում է հիշողությունը, միևնույնն է, այդ օրերի մեջ, Սոնայի հետ կապված դեպքերից բացի, ոչինչ չի մտաբերում:

Եթե հնձան է, ուրեմն վերհիշում է Սոնայի լաջվարդ շապիկի բույրը, լսվում է արծաթ սուրմաների զնգոցը: Հայացքը սահում է դեպի բլրալանջ՝ այնտեղ Սոնայի գերեզմանն է: Եթե ցավատանջ հիշողություններից խուսափող միտքը փախչում է անտառ, ծերունական սիրտը թպրտում է վիրավոր միրհավի պես՝ հուշելով.

«Միրհավ կար անտառում, թռավ արնակոլոլ, երկու փետուր թողեց փափուկ մամուռների վրա…: Միրհավի պես էր Սոնան, աչքերը խաղողի սև հատիկներ, տարիներ առաջ, մի արևոտ աշնան, երբ իր ջլուտ ոտները պղնձաքարի ծանրությամբ ճմլում էին խաղողը, և անապակ գինին շիթ առ շիթ ծորում էր մատների արանքով… Միրհավի պես թռավ Սոնան, հետքից թողեց տխրություն և դառնաթախիծ հուշեր»: Այս վերջին տողերում էլ, ինչպես Տերյանի ստողծագրծություններում,տխրությունը զուգակցվում է աշնանային պատկերների առաջ բերած զգացողությունների հետ:

Բնության մեջ ապրած մարդ արարածի նկարագրում, անշուշտ, ուժեղ է արարչագործ շունչը: Որքան կատարյալ ու ամբողջական է Արարչի ստեղծած բնությունն ու տիեզերքը, նույնքան սևեռուն, խորն ու զգայական է բնության մեջ ապրող

մարդու հոգեկան աշխարհը: Բազմաձայն ու բազմերանգ բնությունը իր գոյության արմատները հենց սկզբից է շաղկապել Բակունց մարդու հոգու աշխարհին:

Պատմվածքի սկիզբը՝ աշնան պայծառ օրվա նկարագրությունը, շահեկան կարգավիճակի մեջ է դնում դեղին գույնին: Դեղին են աշնան տերևները, դեղնակարմիր անտառը, հնձած արտերը, արևածաղկի դեղին գլուխը, Սոնայի ոսկեդեղձան հյուսքերը, արդեն դեղնող անտառը, ոսկեգույն ծղնոտներ, ոսկեփրփուր հավքը՝ միրհավը, թափված դեղին հատիկները, դեղին բմբուլները, ոսկե մամուռի նման մարմինը և այլն: Ընդգծված բառերն արդեն օգնում են հասկանալու, որ Բակունցը դեղին բառի զանազան հոմանշային գործածություններով՝ դեղին, դեղնավուն, դեղնակարմիր, ոսկեփրփուր, ոսկե, ոսկեդեղձան, ոսկեգույն, «վրձնում» է դեղինի բոլոր երանգները ողջ պատմվածքում, ինչպես նկարիչը կվրձներ կտավի վրա: Հիշատակված բոլոր արտահայտություններում դեղինն իբրև «արտաքին» գույն է, որպես իրերի, առարկաների , բնության գույն: Թերևս միայն մի՝«ոսկե մամուռի նման մարմին» բառակապակցության մեջ է, որ դեղինն ընկալվում է իբրև խորհրդանիշ՝ սիմվոլ: Սոնայի մեռած մարմինը համեմատվում է ոսկե մամուռի հետ՝ որպես ոսկու պես թանկ ու չմոխրացող մի արժեք Դիլանի կյանքի հիշողության դաշտում: Սակայն սրանով չի ավարտվում դեղինի խորհրդանշական նշանակությունը: Հարափոփոխ բնության տարվա հերթագայության մեջ աշունը խորհդանշում է «բնության կյանքի» մայրամուտը, որին պիտի հաջորդի «մահը» խստաշունչ ձմեռվա տեսքով: Եվ արարչագործ բնությունն ասես դեղինի, դեղնակարմիրի ու դեղնաթույրի մի իսկական խրախճանք ու հրավառություն է ստեղծում իր հրաժեշտից առաջ:

Դիլան դային էլ իր կյանքի մայրամուտն էր ապրում, և իր երկրային կյանքի հիշողության ծիրում անմոռանալի խրախճանքի պես «բոցկլտաց այն օրը, ինչպես միայնակ աստղը մթին երկնքում, ու հավիտյան անջինջ մնացին Սոնան, հնձանը, լաջվարդ շապիկը, արծաթե սուրմաները»:

Դիտարկենք այլ հատված «Անձրևը» պատմվածքից. «Անտառում երևում են հայրենի ծառերը նարնջագույն տերևներով, տանձենիները, որոնց շուրջը չոր խազալի վրա գիշերում է մի գազան…Անտառում մառախուղ է»6:

Նշված տողերը ոչ միայն բնապատկերներ են, այլև խոսում են գրողի գեղարվեստական մտածողության մասի: բնությունն ու մարդը միշտ ներդաշնակ են

եղել իրենց էությամբ ու բնույթով, բայց ժամանակի ընթացքում մարդը հեռացել է բնությունից: բնության պատկերները տարբեր եղանակներին տարբեր տրամադրություն են փոխանցում մարդկանց: Աշունը, մրգերի հասունության շրջան լինելուց բացի, նաև բազմաշերտ ու գունեղ տրամադրության անսպառ գանձարան է:

Բակունցյան աշունը մարդուն կապում է բնությանը, աշնան փոփոխականությունը զուգորդվում է ծմակուտում մրսող և միևնույն ժամանակ պաշտպան դարձած մարդու հետ. «Վրա հասան դառնաշունչ օրերը, ինչպես ցուրտ աշուն: Արտերում հասած ցորենը ծլում էր, հողի մշակները մրսում էին խրամատներում, և անվարժ ձեռքերով փակում հրացանի փակաղակը»:

Աշնան թախծոտ ու միապաղաղ և նույնիսկ դողդողջուն պատկերները գունային շունչ ու ոգի են տվել մեծ գրողների ստեղծագործական մտքի զարգացմանը, շռայլել բնապատկերային հարուստ ներաշխարհ, ընթերցողին ձուլել մայր բնությանը՝ նրան դարձնելով բնության մի մասնիկը: Սիրո, կարոտի, երջանկության, նույնիսկ կյանքի մայրամուտին էլ կարելի է գտնել այնպիսի հոգեվիճակ, որը կձգտի դեպի կատարյալ ու լուսավոր մի աշխարհ, որն ունի աշնան քնքշությունն ու գույները: Այսինքն՝ բնության պատկերն ունենում է երկշերտ ընկալում: Նշված գրողների ստեղծագործություններում ընկալվում է որպես մեռնող բնության վիճակ և զուգակցվում կյանքի մայրամուտին, մարդու թախծոտ տրամադրությանը, մյուս կողմից դիտարկվում է որպես բնության գեղեցիկ վիճակ, գույների աշխարհ, որը համապատասխան տրամադրություններով ու զգացողությամբ է համակում մարդու հոգին: Բացի դրանից՝ բնապատկերը դառնում է որպես ներաշխարհի ու տրամադրության արտացոլման ինքնատիպ հնարանք: Պատահական չէ, որ տերյանական ու բակունցյան տողերում բնության նկարագրությունը միշտ զուգահեռվում է մարդկային ապրումներին:

§ 2 ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

2.1 ՏԵՐՅԱՆԻ ԵՎ ԲԱԿՈՒՆՑԻ ՍՏԵՂԾԱԳԱՐՈԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Բակունցը որպես կամավոր 1917-1918ին կռվել էր հայրենիքի փրկության համար, բայց փրկության փոխարեն պարտությունն էր ուղեկցում: Նրա ստեղծագործությունը Տերյանի արվեստին է հարազատացնում նաև այն լուռ թախիծը, որը հոգու խորքից գալիս ստեղծում է մի առանձնահատուկ մթնոլորտ և նրա մեջ ներգրավում ամբողջ նյութը, թե' բնաշխարհի նկարագրությունը և թե հերոսների կյանքը և կենցաղը: Իրար լրացնող երանգներ ունեն աշնան բնապատկերները. Տերյանի Ոսկեհանդերձ եկար և միգասքող›› բանաստեղծությունը և Բակունցի Միրհավը›› պատմվածքի սկիզբը. Աշուն էր պայծառ աշուն...›› Պատկերի հիմքը զգացողություն է հոգեկան ապրումների այն աշխարը,որը որոշակի դրսևորումներով իր վերաբերմունքն է արտահայտում իրականության հանդեպ:

Նույն հոգեբանական վիճակի արտահայտությունն է ‹‹Միրհավ›› պատմվածքի այս տողերը. Լիներ այնպես լիներ, որ ինքը հնձվոր լիներ, տերտերանց արտը հնձեր, և Սոնան հաց բերեր իրեն, շապիկը քրտներ և քրտնած նստեր կողքին›. Տերյանի՝

* * *

Լինեի չոբան սարերում հեռու,
Գայիր անցնեիր վրանիս մոտով,
Իրար նայեինք անուշ կարոտով,
Քնքուշ ժպտայինք հանկարծ իրարու...››:

Սա նույն երազանքն է, կարոտի նույն կանչը, որ տարածվում է հայրենի բնաշխարհի և այդ բնաշխարհի զարդը հանդիսացող կնոջ վրա[3]:

Հայ արձակի հենասյունը

Ակսել Բակունցը հայ գրականության պատմության մեջ նվաճել է առաջնակարգ տեղ: Նրա ստեղծագործությանը բարձր գնահատական են տվել հայրենի գրականության այնպիսի վարպետներ, ինչպես՝ Ավ. Իսահկյանը, Ալ.Շիրվանզադեն, Եղ.Չարենցը:

«Բակուցը մեր արձակի ամենատաղանդավոր ներկայացուցիչն է›› գրել է

3 Դ.Գասպարյան ‹‹Վ.Տերյանը և հայ արձակը››

Իսահակյանը[4]:

Բակունցին գրող դարձրին ժողովրդական աշխարհի ուրույն պոեզիան մարմնավորող խոնարհ աղջիկը, և անցյալի, վերածնության նկարիչների վրձնին արժանի գեղեցկությունը:

Ամեն մի սերունդ նրա ստեղծագործության մեջ կբացի նոր արժեքներ, մե՛րթ կայծքարի պես փայլատակող, մե'րթ աշնան անտառի տերևների խշշացող, մե՛րթ լիքը հասկերի նման ճայթող, մե՛րթ պողպատի պես զրնգացող ակսելյան բառերի գեղեցիկ հյուսվածքից կքաղի հայրենի հողի, մայրենի լեզվի, ազգային բնավորության, երկրի, բնության և ճշմարտության մեծ սերը, նվիրական սկզբունքներ, որոնց շաղախից էլ հյուսված էր Բակունցի անհատականությունը:

Պոեզիայի ցողաթաթախ ուղեկիցը

Վահան Տերյանը հայ պոեզիայի այն նվիրյալներից էր, որ բնության երևույթները, շշուկները, ստվերները և անգամ լռությունը դարձրել խորհրդավոր սեր ներմուծող մասնիկներ և արտահայտել բանաստեղծական ներշնչանքով: Բնության այսքան մոտ, բնությամբ շնչող բանաստեղծը կարողացել է բնական պատկերներով հուզել ընթերցողի սիրտը, թախիծ ու տխրություն պարգևել:

Տերյանին, իբրև մարդու և բանաստեղծի վիճակված էր ամենից ավելի ապրել ու երգել այդ ամենաանտանելի վիշտը››՝ մենակությունը: Սակայն դա նրա համար ոչ թե ցանկալի, այլ կենասկան հանգամանքներով պարտադրված իրավիճակ է, որը դառնում է հոգեկան անսպառ տառապանքի, բայց նաև լուսավոր անուրջների, սպասումների հորդառատ աղբյուր:

Տերյանական աշունը զուտ աշուն չէ, եղանակ, որ հատուկ է տարվան իր նրբություններով գույներով ու փայլով, այլ աշուն կյանքի, սիրո, ապրումների՝ զուգորդված բազմերանգ գույներով: Իսկ ահա բակունցյան աշունը գեղարվեստական մոտեցումներով հագեցած աշուն, որ ընթերցողին իր գիրկն է առնում, տանում մինչև անտառի կամ այգու խորքը զմայլում ու շլացնում իր բազմազանությամբ:

Այսպիսով, Տերյանի և Բակունցի երգած աշնան ընդհանրությունը, խորհուրդն ու խորհրդանիշը.

---

[4] Ավ.Իսահակյան ՀՕԿ››1934թ

- Կյանքի և մահվան սահմանագիծ
- Սիրո և ատելության սահմանագիծ
- Կնոջ գեղեցկության խորհուրդ
- Բնության հրաշք ու զարդ:

Գեղարվեստական այս մոտեցումները Բակունց – Տերյան ստեղծագործողների հիմնական ասելիքներից էր, մեկը՝ զուտ նկարագրություն, մյուսը՝ խոր անձնական նկրտումներ:

Աշնան թախծոտ միապաղաղ և նույնիսկ երերուն պատկերները, գունային շունչ ու ոգի են տվել մեծ գրողների ստեղծագործական մտքի զարգացմանը, շռայլել բնապատկերային հարուստ ներաշխարհ,զարմանալի կերտվածքով դարձրել բնության մասնիկ, ձուլել նրանց մայր բնությանը:

Խորհրդապաշտ գրողը գրականության նոր ուղի հարթեց՝ կերպավորելով աշունը, տերևը՝ ձուլելով իր հոգու ներդաշնակությանը:

Բակունցի և Տերյանի նկարագրած աշունների համադրությունը

Այս տեսանկունից կարող ենք ասել, որ իրական քնարերգուն բնությունն է, որը, խոցելով մարդ անհատի սիրտն ու հոգին, դարձնում է նրան մի գործիք, որը արտահայտվում է տարբեր ձևերով:

Խոցված ու սքանչացած մտածող գրողը թղթին է հանձնում հոգու թելադրանքով արտահայտված բառաշղթան, որի արդյունքում ձևավորվում է չափածո կամ արձակ ստեղծագործություն:

Արձակագրի աչքերով բնությունը բազում ելևէջներով է հանդես գալիս, շռայլ ու հարուստ բառապաշարով դառնում մի պատմություն, իսկ բանաստեղծի աչքերով՝ ռիթմիկ ու թախծոտ ստեղծագործություն:

Անտառում երևում են հայրենի ծառերը նարնջագույն տերևներով, կաղնիները՝ բաց դեղին ու կարմիր տերևներով, տանձենիները, որոնց շուրջը չոր խազալի վրա գիշերում է մի գազան.....

«Անտառում մառախուղ է»[5]:

Այս տողերը խոսում են ոչ արձակագրի երևակայական երազների մասին,այլ նկարագրում է բնության իրական երևույթը իր ամբողջ հմայքով: Ի հակադրություն այս տողերի «Աշնան» բանաստեղծությունը Տերյանի հոգու ներդաշնակության

[5] Ակ. Բակունց. Երկեր1986թ. «Անձրևը» էջ 267

պատկերն է:

* * *

«Նորից անձրև՛ մշուշ ա՛մպ,
Թախի՛ծ անհուն, տխրա՛նք հեզ,
Աշո՛ւն, քեզ ի՞նչ քնքշությամբ,
Ի՞նչ խոսքերով երգեմ քեզ... »:

Սիրո, կարոտի, երջանկության և նույնիսկ կյանքի մայրամուտին էլ կարելի գտնել այնպիսի մի լար , որը կձգի դեպի կատարյալ ու ներդաշնակ մի աշխարհ», ուր ամեն ինչ խաղաղ է ու մեղմ:

Աշնան խորհրդանիշը կյանքի խորհուրդ ունի՝ մայրամուտի հասնող մարդու կերպարի: Բնությունը և մարդը ներդաշնակ են եղել իրենց բնույթներով, սակայն ժամանակի ընթացքում մարդ անհատը հեռացել է բնությունից և դրանով իսկ դարձել բնության թշնամին ու պատժվում է առ այսօր իր գործած մեղքերի և չարիքների համար:

Ակ. Բակունցի ստեղծագործություններում գեղարվեստական պատկերավորությամբ ստեղծված քերթվածները կարելի է համադրել տերյանական շնչով ստեղծված ստեղծագործությունների հետ: Բակունցյան մոտեցումը կապում է բնությունը մարդու հետ համեմատական մակդրային կաղապարով աշնան փոփոխականությունը զուգորդվում է խրամատում մրսող, բայց միևնույն ժամանակ պաշտպան դարձած մարդու հետ: Իսկ տերյանական մշուշաթաթախ երգերը թելադրում են իր կյանքի դժվարին շրջապտույտը:

Այսպիսով, երկու ստեղծագործողներն էլ կյանքն են ներկայացրել գեղագետի աչքերով, երժշտի լսողությամբ և գրողի սուր մտքով տոգորված, որ ստիպել են ընթերցողին ընկղմվել ու թափանցել այլաշխարհային մենություն, դառնալ նորովի ծնված ու նոր սկզբունքներով օժտված մարդ:

Մտքի հզոր վարպետները ստեղծել են բնության մի «արվեստանոց», որտեղ միաձուլվում են աշխարհի և մարդու կապերի յուրօրինակ պատկերացումները:

Ու թեև խոսում ենք կաղապարված երևույթի մասին, բայց հիմքում տեսնում ենք բանական էակի, որ սքողված է տարբեր հանդերձանքներով, լսում նրա երերուն ձայնը ու սուզվում հոգու անհունը: Այսպիսի ճկուն ու հրաշալի թռիչքով նոր էջ են բացել հայ գրականության պատմության մեջ և նրանց թողած գրական ավանդը դեռ դարեր շարունակ մեզ կուղեկցեն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հիրավի Տերյանի և Բակունցի աշնան նկարագրությունների կողքին կանգնած է անհատ մարդը՝ իր փխրուն հոգով, ում առջև բացվում են մութ ու թափուր անտառներ, մթնշաղում կորած դաշտեր՝ դառնալով հուզաթաթախխ մեղեդի, որ թրթռում է նրանց էությունից պոկված տողերի մեջ՝ միախառնվելով աշնան պատկերին:

Ամփոփելով աշխատանքը, դուրս բերվեց հետևյալ եզրահանգումները՝

- Տերյանի և Բակունցի գեղարվեստական մտածողությունը նման է խորհրդապաշտական պատկերներում: Գրողները խորհրդանշային պատկերները զուգադրում են կյանքի իրականությանը՝ ընթերցողին դարձնելով իրենցապրումների հաղորդակից:
- Աշնան բնապատկերների, գույների սիմվոլիստական երանգավորումը Տերյանի և Բակունցի ինքնատիպ ոճի կատարելության ակնհայտ արդյունք է: Ինչպես հայտնի է, գույները հզոր միջոց են մարդու հոգեկան աշխարհի և հույզերի վրա ազդելու համար: Նշված հանգամանքով է պայմանավորված դրանց մուտքը արվեստի բնագավառ: Բոլոր մշակույթներին էլ հատուկ են գույների խորհրդանշական վերաիմաստավորումները, սակայն մշակութային տարբեր համակարգերում դրանք տարբեր մեկնաբանություններ են ստանում:
- Տերյանի ու Բակունցի գեղարվեստական պատկերներում աշունը խորհրդանիշ է տխրության, կյանքի մայրամուտի և ներդաշնակում է քնարական հերոսի ապրումներին ուտրամադրություններին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ակ. Բակունց. Երկեր1986թ. «Անձրևը›› Երևան, 1976
2. Ավ.Իսահակյան ՀՕԿ››1934թ
3. Գագիկ Մանասյան ‹‹Խորհրդանշանների հանրագիտարան››, Երևան, 2007 թ.
4. Դ.Գասպարյան ‹‹Վ.Տերյանը և հայ արձակը››
5. Իշխանյան Ռ., Արևելահայ բանաստեղծության լեզվի պատմություն (17րդ դարից մինչև 1920 թ.), Երևան, 1978:
6. Հովհաննիսյան Մ., Վահան Տերյանի չափածոյի գունային մակդիր սիմվոլները, «Կանթեղ», Երևան, 2009, N2(39):
7. Ջրբաշյան Էդ., Գրականության տեսություն, Երևան, 1980:
8. Տերյան Վահան, երկերի ժողովածու 4 հատորով, հ. 12, Երևան, 1972-1973: